

Դատական գործ N: ԵՔԴ/0368/02/08

Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	14-03-2008
Հայցվոր/դիմող	
Անուն:	Հայհեղինակ հեղինակների իրավունքների պաշտպանության ԱԿ
Հասցե:	ք.Երևան, Կոռյունի 19ա
Պատասխանող	
Անուն:	Ֆոկուս գովազդ ստուդիո ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան, Գ.Նժդեհի 2-18
Քաղաքացիական գործի ստացման կարգը:	Առաջին անգամ
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	5.1
Պետական տուրք:	4000
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:	
Հակընդդեմ պահանջ:	
Պետական տուրք:	
Ամսաթիվ:	17-03-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական
Դատավորի անուն:	Կարինե Գալֆրեդի Պետրոսյան
Որոշման ամսաթիվ:	17-03-2008
Դատաքննության ամսաթիվ:	14-04-2008
Դատաքննության ամսաթիվ:	25-04-2008
Դատաքննության ամսաթիվ:	16-05-2008
Դատաքննության ամսաթիվ:	12-06-2008
Դատաքննության ամսաթիվ:	16-06-2008
Դատաքննության ամսաթիվ:	30-06-2008

Դատաքննության ամսաթիվ:	17-07-2008
Դատաքննության ամսաթիվ:	28-08-2008
Դատաքննության ամսաթիվ:	01-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	12-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	30-09-2008
Դատաքննության ամսաթիվ:	07-10-2008
Դատաքննության ամսաթիվ:	17-10-2008
Դատաքննության ամսաթիվ:	03-11-2008
Ծանուցագիրը ուղարկվել է:	31-03-2008
Այլ նշումներ:	
Ժամ:	11-00

Հայցի լուծման ամսաթիվ:	03-11-2008
Հայցի լուծումը:	Մերժվել է

Հոդված	
Հոդված	ՀՀԻՄ 20,65
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	

Դատական ակտ:	<p>Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ-0368 2008թ.</p> <p>Վ Ճ Ի Ռ Հանուն Հայաստանի Հանրապետության</p> <p>03.11.2008թ. ք. Երևան</p> <p>Երևանի քաղաքացիական դատարանը հետևյալ կազմով</p> <p>նախագահությամբ դատավոր Վ. Պետրոսյանի, քարտուղարությամբ Ս. Բաղդասարյանի</p> <p>մասնակցությամբ հայցվոր «Հայիեդինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ ներկայացուցիչ Արարատ Անտոնյանի</p> <p>պատասխանող «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Նելլի Հարությունյանի</p> <p>դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Հայիեդինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի ընդդեմ «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի` լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին</p> <p>Պ Ա Ր Ջ Ե Ց</p> <p>Գործի դատավարական նախապատմությունը</p> <p>Երևանի քաղաքացիական դատարանի 17.03.2008թ. որոշմամբ</p>
---------------------	---

վարույթ է ընդունվել «Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի հայցադիմումն ընդդեմ «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին:

Երևանի քաղաքացիական դատարանը 27.03.2008թ. որոշում է կայացրել գործը դատաքննության նախապատրաստելու մասին: Նույն դատարանի 12.09.2008թ. որոշմամբ քաղաքացիական գործով նշանակվել է դատաքննություն:

Հայցվորի իրավական դիրքորոշումը

«Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքին համապատասխան ստեղծվել է հեղինակային իրավունքի օբյեկտների իրավատերերի (որոնք հանդիսանում են Կազմակերպության անդամ) իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով և հանդիսանում է ՀՀ տարածքում հեղինակային իրավունքի իրավատերերի գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություն, որը գործում է օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում:

Կազմակերպությունն իրականացնում է մի շարք գործառույթներ այդ թվում՝ կնքում է

հեղինակային իրավունքի օբյեկտների օգտագործողների հետ լիցենզային պայմանագրեր հեղինակային իրավունքի օբյեկտների օգտագործման վերաբերյալ, համաձայնեցնում է օգտագործողների հետ վարձատրության չափը և լիցենզային պայմանագրի այլ պայմաններ և այլ գործառույթներ:

«Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն, առանց Կազմակերպության հետ Օրենքով սահմանված լիցենզային պայմանագրի կնքման, օգտագործում է որոշ հեղինակների ստեղծագործություններ: Կազմակերպությունն օրենքով սահմանված իր իրավասությունների սահմաններում հեղինակների իրավունքները պաշտպանելու, առանց համապատասխան թույլտվության հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների անօրինական օգտագործումը կանխելու, օգտագործողների հետ լիցենզային պայմանագիր կնքելու և համապատասխանաբար հեղինակային վարձատրության հաշվարկումն ու հավաքումն ապահովելու նպատակով բազմաթիվ անգամ դիմել է «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ին: Սակայն մինչև օրս Կազմակերպության բանավոր և գրավոր դիմումները մնացել են անպատասխան, որի հետևանքով խախտվել են հեղինակների գույքային իրավունքները և հեղինակները գրկվել են իրենց հասանելիք վարձատրությունից: Ելնելով վերոգրյալից՝ հայցվորը խնդրել է հայցը բավարարել: Հրավիրված նախնական դատական նիստերի ընթացքում հայցվորի ներկայացուցիչը դատարանին ներկայացրեց լրացուցիչ փաստարկներ՝ նշելով, որ պատասխանողը չի կարող իրաժարվել Կազմակերպության հետ լիցենզային պայմանագիր կնքելուց՝ առանց բավարար հիմքերի: Պատասխանողը դատարան չի ներկայացրել այնպիսի բավարար փաստարկներ, որոնք կհիմնավորեին իր կողմից լիցենզային պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքը, ինչը ենթադրում է, որ պատասխանողի կողմից հեղինակների ստեղծագործությունները օգտագործվում են անօրինական կերպով:

Պատասխանողի արդարացումը, որ հայցվորի կողմից չեն հստակեցվել, թե որ հեղինակի, որ ստեղծագործությունը, ինչ եղանակով է օգտագործվել պատասխանողի կողմից, իմաստազուրկ է, քանի որ Օրենքում հստակ նշված է, որ հասարակական միջոցառումներ կազմակերպողները և հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների օբյեկտների այլ օգտագործողները չեն կարող իրաժարվել Կազմակերպության հետ լիցենզային

պայմանագիր կնքելուց առանց բավարար հիմքերի, մինչդեռ պատասխանողն իրականացնում է հրապարակային կատարումներ: Բացի այդ, Օրենքի որևէ դրույթ, չի պարտավորեցնում հայցվորին նշել, թե պատասխանողը որ հեղինակի, որ ստեղծագործությունն է օգտագործում, քանի որ բավարար է միայն այն, որ պատասխանողը իրականացնում է հրապարակային կատարումներ:

Հայցվորի ներկայացուցիչը նաև նշել է, որ 28.07.2005թ–ին Կազմակերպության և ՄԻԶԱԿ-ի (Կոմպոզիտորների Կազմակերպության Միջազգային Կոնֆեդերացիա) միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ Կազմակերպությանը տրված է լիակատար իրավունք իրենց սահմանած ժամկետներում համապատասխան ստեղծագործությունների օգտագործման դիմաց ՀՀ տարածքում օտարերկրյա իրավատերերի հեղինակային վարձատրություն հավաքելու:

Վկայակոչելով «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը և «Ստեղծագործությունների հրապարակային կատարման, հեռարձակման, ձայնագրությունների միջոցով վերարտադրության, վարձույթով տալու, դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններն արդյունաբերության մեջ վերարտադրելու համար հեղինակային վարձատրության նվազագույն դրույթաչափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 11.01.2007թ. թիվ 506-Ն որոշումը, հայցվորի ներկայացուցիչը նշել է, որ հեղինակային վարձատրություն վճարող սուբյեկտ դիտվում է այն հաստատությունը, որտեղ տեղի է ունենում հրապարակային կատարումը, այլ ոչ թե այն անձը(ինք), ով(ովքեր) իրականացնում է (են) հրապարակային կատարում:

Ղատաքնության ընթացքում հայցվորի ներկայացուցիչը պնդեց հայցադիմումը և գրավոր փաստարկները և որպես հիմնավորող ապացույց վկայակոչեց «Կենտրոն» հեռուստաընկերության միջոցով տարածված հոլովակը, որով գովազդվում է «Զիանի» ակումբում կատարվող (ըստ հայցվորի) հրապարակային կատարումը:

Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանողի ներկայացուցիչ Նելլի Հարությունյանը 21.04.2008թ. դատարան ներկայացրած հայցադիմումի պատասխանով առարկել է հայցի դեմ, նշելով, որ պահանջը ենթակա է մերժման ամբողջ ծավալով հետևյալ պատճառաբանությամբ.

Հայցվորը հայցադիմումում նշել է, որ «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն առանց «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության հետ օրենքով սահմանված լիցենզային պայմանագրի կնքման օգտագործում է որոշ հեղինակների ստեղծագործությունները: Սակայն հայցվորը չի ներկայացրել, թե որ հեղինակի և որ ստեղծագործությունն է «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի կողմից օգտագործվել առանց հեղինակի թույլտվության, առավել ևս չի ներկայացրել որևէ ապացույց «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի կողմից որևէ հեղինակի ստեղծագործությունը օգտագործելու վերաբերյալ:

Պատասխանողի ներկայացուցիչը նաև նշել է, որ որևէ հեղինակի գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարում իրականացնելու համար նախ պետք է առկա լինի գրավոր պայմանագիր: Գրավոր պայմանագրում պետք է նշված լինի հեղինակի կողմից ստացված լիազորությունների շրջանակը: Միայն պայմանագրի առկայության պայմաններում պարզ կլինի, որ հեղինակի գույքային իրավունքների կառավարումն իրականացնում է «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունը, և ինչպիսի լիազորություններով է օժտված:

Հաշվի առնելով վերոգրյալը պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է հայցը մերժել ամբողջությամբ:

Ի լրումն 21.04.2008թ. ներկայացված հայցադիմումի պատասխանի՝

04.05.2008թ. դատարան ներկայացրած պատասխանով պատասխանողի ներկայացուցիչը շարադրել է հետևյալը.
Վերոհիշյալ պայմանագրերը որևէ կերպ չեն առնչվում հայցի առարկայի հետ, և ընդհանրապես չկա որևէ ապացույց, որը կհաստատեր հայցվորի կողմից նշված իրավախախտման փաստի և պատասխանողի գործողությունների միջև պատճառահետևանքային կապը: Հայցվորը չի ներկայացրել «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ կողմից հայցվորի հետ վերոնշյալ պայմանագրերը կնքած հեղինակների ստեղծագործությունը օգտագործելու վերաբերյալ ապացույցներ, առավել ևս չի ներկայացրել որևէ ապացույց «Ֆոկուս գովազդ ստուդիո» ԱՊԸ-ի կողմից որևէ հեղինակի ստեղծագործությունը անօրինական կամ առհասարակ օգտագործելու վերաբերյալ:

Որևէ հեղինակի գույքային իրավունք խախտելու համար նախ՝ պատասխանողը պետք է «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (հետագայում՝ Օրենք) սահմանված որևէ ձևով օգտագործեր հեղինակի ստեղծագործությունը, ինչը հայցվորը չի ապացուցել, ապա՝ այն պետք է օգտագործեր առանց հեղինակի թույլտվության: Հետևաբար հայցվորը պետք է հստակ մատնանշի այն ստեղծագործությունը, որը պատասխանողի կողմից օգտագործվում է առանց հեղինակի թույլտվության, ստեղծագործությունը ինչ եղանակով է օգտագործվում պատասխանողի կողմից, որ հայցվորը ընդհանրապես իրականացնում է այդ հեղինակի գույքային իրավունքների պաշտպանությունը:

Նկատի ունենալով, որ հայցվորի կողմից դեռևս չեն հստակեցվել, թե որ հեղինակի, որ ստեղծագործությունը, ինչ եղանակով է օգտագործվել պատասխանողի կողմից, պատասխանողը գտնում է, որ ներկայացված պայմանագրերը անհրաժեշտ չեն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն և խնդրել է հանել ապացույցների կազմից: Վերոգրյալների հիման վրա մեկ անգամ ևս պնդել է իր դիրքորոշումը և խնդրել հայցը մերժել ամբողջ ծավալով:

Ի պատասխան 16.05.2008թ. ներկայացված փաստարկների և ի լրումն 21.04.2008թ., 04.05.2008թ. ներկայացված հայցադիմումի պատասխանների՝ պատասխանողի ներկայացուցիչը 30.05.2008թ. և 16.06.2008թ. ներկայացրել է հայցադիմումի լրացուցիչ պատասխաններ, որտեղ շարադրել է հետևյալը.

Հայցվորի կողմից որպես ապացույց ներկայացված տեսակավառակում առկա գովազդային տեսահոլովակի ծայնագրությունից պարզ չի, թե որ հեղինակի, որ ստեղծագործությունը ում կողմից է կատարվել և ընդհանրապես կատարում տեղի է ունեցել, թե ոչ:

Օրենքի տրամաբանությունից բխում է, որ հրապարակային կատարման եղանակով (անմիջական կատարման դեպքում) ստեղծագործության օգտագործման համար պատասխանատվություն կրում է տվյալ ստեղծագործության կատարողը և հետևաբար հայցվորը պետք է պահանջներ ներկայացնի հնարավոր կատարողներին:

Օրենքի տրամաբանությունից բխում է, որ հրապարակային կատարման եղանակով (անմիջական կատարման դեպքում) ստեղծագործության անօրինական օգտագործման համար պատասխանատվություն կրում է տվյալ ստեղծագործության կատարողը և պարտականություններ կարող են առաջանալ նրանց, այլ ոչ թե «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի համար:

«Զիանի» ակումբում երգչուհիներ Անի Թովմասյանը, Արսեն Սաֆարյանը, Աննա Խաչատրյանը վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա կատարում են իրենց երգացանկում ընդգրկված երգերը, որպիսի պայմաններում «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն որևէ հրապարակային կատարում չի իրականացնում:

Ղատաքնության ընթացքում պատասխանողի ներկայացուցիչը

պնդեց գրավոր փաստարկները և խնդրեց հայցը մերժել: Հայցվորի ներկայացրած տեսահոլովակի կապակցությամբ պատասխանողի ներկայացուցիչ Ն. Հարությունյանը հայտնեց, որ ներկայումս նշված անձանցից պատասխանողի հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքել միայն Արսեն Սաֆարյանի և Աննա Խաչատրյանի հետ, որոնք էլ կատարում են իրենց երգացանկում ընդգրկված երգերը:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Ջիանի» ապրանքային (սպասարկման) նշանի իրավատեր է հանդիսանում անհատ ձեռնարկատեր Անի Մարկոսյանը (գրանցման համար 38.03713, գրանցված՝ 01.10.2004թ., վկայական 01Ա 086061):

«Ֆոկուս գովազդ ստուդիո»-ն ստեղծվել է որպես տնտեսական գործունեություն իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (գրանցման համարը 269.110.03133, գրանցված 14.04.2006թ., վկայական 03Ա 071892):

01.11.2004թ. «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թադևոսյանի, և անհատ ձեռնարկատեր Անի Մարկոսյանը կնքել են պայմանագիր՝ առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեություն իրականացնելու մասին:

«Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն գործունեություն է ծավալում նաև «Ջիանի» ակումբում:

«Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության կողմից հայց ներկայացնելու պահից՝ 14.03.2008թ., գործել են «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Աննա Խաչատրյանի, «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Արսեն Սաֆարյանի, «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Անի Թովմասյանի միջև կնքված պայմանագրերը:

Աննա Խաչատրյանը, Արսեն Սաֆարյանը 12.08.2008թ. և 26.08.2008թ դատարան ներկայացրած դիմումներում հայտնել են, որ «Ջիանի» ակումբում կատարում են միայն իրենց երգացանկում ընդգրկված երգերը:

Պատարանի իրավական վերլուծությունները

Հայցվորը հայցը փաստարկել է հետևյալ հիմնավորումներով. «Ջիանի» ակումբում «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն իրականացնում է հրապարակային կատարում՝ անօրինական օգտագործելով հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտները, ինչի հետևանքով խախտվում է հեղինակների գույքային իրավունքները և նրանք զրկվում են իրենց հասանելիք վարձատրությունից:

Պատասխանողի կողմից հրապարակային կատարում իրականացնելու փաստի ապացուցման պարտականությունը կրում էր հայցվոր կողմը:

Լսելով կողմերի դիրքորոշումները, հետազոտելով գործում եղած գրավոր ապացույցները՝ դատարանը գտավ, որ հայցը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

«Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությանը հեղինակների, այդ թվում նաև երգիչ-հեղինակների անդամակցությունը չի բացառում կամ սահմանափակում հեղինակների կողմից այլ անձանց հետ ինքնուրույն պայմանագիր կնքելու իրավունքը (նշված փաստը

հաստատվում է նաև հայցվորի կողմից ներկայացված հեղինակների հետ կնքված պայմանագրերով):

Վերը նշված իրավունքից օգտվելով՝ որոշ հեղինակներ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր են կնքել նաև պատասխանողի հետ՝ կատարելով իրենց հեղինակային ստեղծագործությունները:

«Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով հրապարակային կատարում է համարվում ստեղծագործության ոչ նյութական ձևով մատուցումը ասմունքի, խաղի, երգի, պարի կամ այլ միջոցներով ինչպես անմիջական կատարման, այնպես էլ տեխնիկական սարքերի օգնությամբ այն վայրերում, որտեղ ներկա են կամ կարող են ներկա գտնվել անձինք, ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին, անկախ այն բանից՝ նրանք միաժամանակ ներկա են նույն վայրում, թե տարբեր ժամանակ՝ տարբեր վայրերում: Նշված հոդվածը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86 հոդվածի 1-ին մասի կարգով մեկնաբանելով դատարանը գտնում է, որ հրապարակային կատարում իրականացնելու համար «Ֆոկուս գովազդ ստուդիոն» ՍՊԸ-ն պետք է կամ ստեղծագործությունն անմիջական կատարեր, որը իրավաբանական անձի դեպքում անհնար է, կամ տեխնիկական սարքերի միջոցով ոչ նյութական ձևով մատուցեր:

Սույն գործով «Ֆոկուս գովազդ ստուդիոն» ՍՊԸ-ն չի կարող համարվել ստեղծագործության հրապարակային կատարող, քանի որ տեխնիկական սարքերի միջոցով չի մատուցում ստեղծագործությունները, այլ դրանք անմիջականորեն կատարվում են երգիչների կողմից, ընդ որում՝ վերջիններս հանդիսանում են իրենց կողմից կատարվող երգերի հեղինակներ:

Հայցվորի վկայակոչած ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի թիվ 506 որոշումը սույն գործով կիրառելի չէ, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը, իսկ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի տեսանկյունից «Ֆոկուս գովազդ ստուդիոն» ՍՊԸ-ի համար պարտականություններ չեն առաջանում, քանի որ վերջինս հրապարակային կատարում չի իրականացնում:

Ինչ վերաբերում է հայցվորի ներկայացրած տեսասկավառակին, ապա ըստ պատասխանողի ներկայացուցչի՝ ներկայումս նշված անձանցից վճարովի ծառայություններ են մատուցում միայն Աննա Խաչատրյանը և Արսեն Սաֆարյանը, որոնք էլ որպես հրապարակային կատարում իրականացնողներ՝ կատարում են իրենց երգացանկում ընդգրկված երգերը:

Հայցվորը չապացուցեց վերը նշված երգիչներից որևէ մեկի երգացանկում այլ հեղինակների ստեղծագործություններ ընդգրկված լինելու փաստը, չնայած որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 1-ին կետի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130, 131, 132, 149.3, 149.4 հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Ֆոկուս գովազդ ստուդիոն» ՍՊԸ-ի՝ լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

	<p>Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով: Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:</p>
	ԴԱՏԱՎՈՐ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:	08-12-2008
Էջերի քանակը:	570
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	08-12-2008
Էջերի քանակը:	1-ին հատորը՝ 120, 2-րդ հատորը՝ 128, 3-րդ հատորը՝ 123, 4-րդ հատորը՝ 98, 5-րդ հատորը՝ 105
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	08-12-2008
Ուր:	<< քաղաքացիական վերաքննիչ դատարան
Գրության համարը:	Ե-10929
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	
Ամսաթիվ:	11-12-2008
Դատական Գործ N: ԵԲԴ/0368/02/08	
Ամսաթիվ:	28-11-2008
Բողոք բերող անձը	
Անուն:	Հայեղինակ հեղինակների իրավունքների պաշտպանության ԱԿ
Հասցե:	Կորյունի 19ա
Տիպ:	Առետրային /ԲԲԸ, ՓԲԸ, ՍՊԸ,Ա/Կ եվ այլն/
Ներկայացուցիչ	
Անուն	Արարատ
Ազգանուն	Անտոնյան
Հասցե	
Սեռ	Արական
Ուն կողմից է բերվել բողոքը:	Հայցվորի ներկայացուցիչ
Պետական տուրք:	10000
Պատասխանի ստացման	

ամսաթիվ:	
Պատասխան բերող անձը	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	03.11.08 մերժվել է
Գործի համարը:	ԵՔԴ/0368/02/08
Ամսաթիվ:	12-12-2008
Վիճակագրական տողի համարը:	5.1
Գործի համարը:	ԵՔԴ/0368/02/08
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	1-ին հատորը`120, 2-րդ հատորը` 128, 3-րդ հատորը` 123, 4-րդ հատորը`98, 5-րդ հատորը` 105
Ամսաթիվ:	12-12-2008
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տարոն Մանվելի Նազարյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Կարինե Հակոբյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Տիգրան Սահակյան
Երբ:	29-12-2008
Որոշումը ուղարկվել է կողմերին:	29-12-2008
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	29-12-2008
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	04-02-2009
Ամսաթիվ:	04-03-2009
Ամսաթիվ:	04-03-2009
Ամսաթիվ:	20-03-2009
Ամսաթիվ:	19-03-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-12-2008
Ժամ:	13.00
Ամսաթիվ:	19-03-2009
Անփոփոխ թողնված դատական ակտ:	Պատճառաբանվել է
Այլ նշումներ:	

Դատական ակտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Երևանի քաղաքացիական դատարան Քաղաքացիական գործ թիվ
ԵՔԴ/0368/02/08

Քաղաքացիական գործ թիվ ԵՔԴ/0368/02/08

Նախագահող դատավոր Կ. Պետրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝
Վերաքննիչ դատարան)

նախագահությամբ Տ.Նազարյանի

մասնակցությամբ դատավորներ Կ.Հակոբյանի

Տ.Սահակյանի

քարտուղարությամբ Դ.Աղանյանի

մասնակցությամբ

հայցվորի ներկայացուցիչ Կ.Պետրոսյանի

պատասխանողի ներկայացուցիչ Ն. Հարությունյանի

2009 թվականի մարտի 19-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «Հայիեղինակ» հեղինակների
իրավունքների պաշտպանության ՀԿ (այսուհետ նաև
Կազմակերպություն) վերաքննիչ բողոքը Երևանի քաղաքացիական
դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.11.2008 թվականի թիվ
ԵՔԴ/0368/02/08 վճռի դեմ քաղաքացիական գործով ըստ հայցի
«Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի
ընդդեմ «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի (այսուհետ նաև
Ընկերություն) լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու
պահանջի մասին,

Պ Ա Ր Ջ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ն
հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ «Ֆոկուս գովազդ ստուդիո»
ՍՊԸ-ի լիցենզային պայմանագիր կնքելուն հարկադրելու պահանջի
մասին:

Երևանի քաղաքացիական դատարանի 03.11.2008 թվականի թիվ
ԵՔԴ/0368/02/08 վճռով հայցը մերժվել է:

Հայցվորը Դատարանի 03.11.2008 թվականի թիվ ԵՔԴ/0368/02/08

վճռի դեմ 28.11.2008 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ բողոքին ներկայացվել է պատասխան:

2. Վերաքննիչ բողոքի քննության համար նշանակություն ունեցող և
Դատարանի կողմից հաստատված փաստերը.

1. «Զիանի» ապրանքային (սպասարկման) նշանի իրավատեր է
հանդիսանում անհատ ձեռնարկատեր Անի Մարկոսյանը,

2. «Ֆոկուս գովազդ ստուդիո»-ն ստեղծվել է որպես տնտեսական
գործունեություն իրականացնող ՍՊԸ: Ընկերությունը, ի դեմս
տնօրեն Ս. Թադևոսյանի և անհատ ձեռնարկատեր Անի Մարկոսյանը
կնքել են պայմանագիր՝ առանց իրավաբանական անձ

կազմավորելու համատեղ գործունեություն իրականացնելու մասին,

3. «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ն գործունեություն է ծավալում
նաև «Զիանի» ակումբում,

4. «Հայիեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության
ՀԿ-ի կողմից հայց ներկայացնելու պահից՝ 14.03.2008 թվական,

գործել են «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Աննա Խաչատրյանի,

«Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Արսեն Սաֆարյանի, «Ֆոկուս գովազդ ստուդիո» ՍՊԸ-ի և Անի Թովմասյանի միջև կնքված պայմանագրերը,

5. Աննա Խաչատրյանը, Արսեն Սաֆարյանը 12.08.2008 թվականին և 26.08.2008 թվականին դատարան ներկայացրած դիմումներում հայտնել են, որ «Զիանի» ակումբում կատարում են միայն իրենց երգացանկում ընգրկված երգերը:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և բողոք բերած անձի պահանջը.

«Հայիեդինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Բողոք բերած անձի համոզմամբ Դատարանը խախտել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները.

Այս հիմքը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով. Դատարանի, որպես հայցի մերժման պատճառաբանության մեջ նշված հեղինակների և Ոնկերության միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերը չեն կարող վերաբերել քննվող գործին, քանի որ համաձայն վերոնշյալ պայմանագրերի երգիչ-հեղինակները հանդես են եկել որպես կատարող և կատարել են իրենց երգացանկում ընգրկված երգերը: Նշված ծառայությունների մատուցման պայմանագրերը վերաբերում են հարակից իրավունքներին, մինչդեռ դատաքննության ընթացքում նշվել է, որ Կազմակերպությունը զբաղվում է միայն ստեղծագործության հեղինակների հեղինակային իրավունքների, այլ ոչ թե հարակից իրավունքների պաշտպանությամբ և հայցադիմումի պահանջը վերաբերել է հեղինակային իրավունքին, այլ ոչ թե հարակից իրավունքին: Այսպիսով Դատարանը չկարողանալով տարանջատել հեղինակային իրավունքը հարակից իրավունքից, հեղինակային իրավունքի պայմանագիրը նույնացրել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հետ:

2. Բողոք բերած անձի համոզմամբ Դատարանը սխալ է մեկնաբանել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ինչի արդյունքում խախտել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջը . Այս հիմքը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը Օրենքի 20-րդ հոդվածը մեկնաբանելիս այն չի համադրել մյուս հոդվածների հետ, մինչդեռ նման համադրումից ակնհայտ է դառնում, որ հրապարակային կատարման համար լիցենզային պայմանագիրը կնքվում և վարձատրությունը տրվում է հրապարակային կատարման կազմակերպչի, այլ ոչ թե կատարողի կողմից: Այսպիսով Դատարանն օրենքը մեկնաբանելիս փոփոխել է դրա իմաստը՝ խախտելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը:

3. Բողոք բերած անձի համոզմամբ Դատարանը ոչ կիրառելի է համարել ՀՀ կառավարության 11.01.2007 թվականի թիվ 506-Ն որոշումը, որը պետք է կիրառեր.

Այս հիմքը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը ոչ կիրառելի համարելով վերոնշյալ որոշումը, նշել է, որ բացառապես օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը: Սակայն Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հենց «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում ուղղակի նշված է, որ «.....հեղինակային

վարձատրության նվազագույն դրույքաչափերը սահմանում է ՀՀ կառավարությունը»: Անգամ եթե նշված որոշումը կիրառելի չէ, ապա, «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հեղինակային վարձատրությունից հրաժարվելու մասին պայմանագիրն առոչինչ է, իսկ վարձատրության չափը և վճարման կարգը սահմանվում է պայմանագրով:

Բողոք բերած անձի պնդմամբ տվյալ դեպքում հեղինակների և Կազմակերպության միջև կնքվել է հեղինակային իրավունքի մասին պայմանագրեր, համաձայն որի հեղինակը բացառիկ իրավունք է տվել Կազմակերպությանը՝ ստեղծագործությունների օգտագործումը թույլատրելու և ֆիզիկական և իրավաբանական անձանցից հասանելիք հեղինակային վարձատրությունը հավաքելու համար: Փաստորեն նույնիսկ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված նվազագույն դրույքաչափերը չգործելու դեպքում, Կազմակերպությունը հեղինակի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակում կարող է Ընկերությանը ներկայացնել հեղինակային պայմանագիր կնքելու պահանջ, իսկ հեղինակային վարձատրության չափը կարող էր որոշվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Երևանի քաղաքացիական դատարանի 03.11.2008 թվականի թիվ ԵՔԴ/0368/02/08 քաղաքացիական գործով կայացված վճիռը:

4. Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները. Ըստ պատասխան ներկայացրած անձի բողոք բերած անձը չի ներկայացրել, թե որ հեղինակի և որ ստեղծագործությունն է Ընկերության կողմից օգտագործվել առանց հեղինակի թույլտվության, առավել ևս որևէ ապացույց չի ներկայացրել Ընկերության կողմից որևէ հեղինակի ստեղծագործությունը օգտագործելու վերաբերյալ: Բացի այդ Ընկերության կողմից ներկայացրած պայմանագրերը վերաբերում են հարակից իրավունքին, մինչդեռ Կազմակերպությանն անդամակցությունը չի սահմանափակում այլ անձանց հետ ինքնուրույն պայմանագիր կնքելու իրավունքը:

Անհիմն է նաև բողոք բերած անձի այն պնդումը, թե պատասխանողն իրականացնում է հրապարակային կատարում: «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի իմաստով Ընկերությունը հրապարակային կատարում իրականացնելու համար պետք է ստեղծագործությունն անմիջական կատարեր, որն իրավաբանական անձի դեպքում անհնար է կամ տեխնիկական սարքերի օգնությամբ ոչ նյութական ձևով մատուցել, որպիսի գործողություն սակայն Ընկերության կողմից երբևէ չի իրականացվել:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 11.01.2007 թվականի թիվ 506-Ն որոշմանը, ապա դրանով չէր կարող պարտականություններ առաջանալ Ընկերության համար, ուստի բողոք բերածն ինքն է իր մեկնաբանմամբ փոխում օրենքի իմաստը և ընդլայնում հրապարակային կատարում հասկացությունը:

Ելնելով վերոգրյալից պատասխան ներկայացրած անձը խնդրել է օրինական ուժի մեջ թողնել Երևանի քաղաքացիական դատարանի 03.11.2008 թվականի թիվ ԵՔԴ/0368/02/08 քաղաքացիական գործով կայացված վճիռը, իսկ վերաքննիչ բողոքը մերժել:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բողոք բերած անձը չի վիճարկում Դատարանի կողմից հաստատված փաստերը, այլ բարձրացնում է միայն իրավունքի հարցեր:

1. Քննելով վերաքննիչ բողոքը դրանում նշված հիմքերի և

հիմնավորումների սահմաններում դատարանը գտնում է, որ Ղատարանը վճռի իրավական վերլուծությունները բաժնում անդրադարձել է ինչպես ստեղծագործությունների կատարմանը՝ որպես հարակից իրավունքի, այնպես էլ ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի հարցերին: Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերը, որպես կատարման վերաբերյալ պայմանագրեր, չեն նույնացվել լիցենզային պայմանագրերի հետ, այլ տվյալ գործի հայցվորի կողմից չվիճարկված փաստերի ներքո դատարանը գտել է, որ երգերը կատարվել են երգիչների կողմից: Ղրանից գատ, վերլուծվել է նաև հեղինակային իրավունքի հարցը և Ղատարանը տվյալ գործի հայցվորի կողմից չվիճարկված փաստերի ներքո արձանագրել է, որ կատարողները հանդիսանում են իրենց կողմից կատարվող երգերի հեղինակներ: Վերջիններս կատարել են միայն իրենց երգացանկի երգեր և այլ անձանց հեղինակային իրավունքների մասին խոսելը սույն գործով անտեղի է: Այս փաստը վկայում է, որ հայցվորի և հեղինակ կատարողների միջև պայմանագրային հարաբերությունները բոլորովին այլ քաղաքացիաիրավական ինստիտուտի կարգավորման առարկա են, հետևաբար բողոք բերած անձի պնդումն առ այն, որ Ղատարանը, չկարողանալով տարանջատել հեղինակային իրավունքը հարակից իրավունքից, հեղինակային իրավունքի պայմանագիրը նույնացրել է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հետ, անհիմն է:

2. Բողոքի երկրորդ հիմքը նույնպես անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոք բերած անձը գտնում է, որ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի իմաստով պատասխանող հանդիսանում է հեղինակային իրավունքների օբյեկտի օգտագործող, ուստի նույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի ուժով պարտավոր է լիցենզային պայմանագիր կնքել կազմակերպության հետ: Հիշատակված իրավանորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կազմակերպության հետ լիցենզային պայմանագիր պետք է կնքեն հեղինակային իրավունքի և հարակից իրավունքի առարկան հրապարակային միջոցառումների կազմակերպողները և այլ օգտագործողները: Տվյալ դեպքում արդյո՞ք պատասխանող ընկերությունը հիշատակված իրավանորմի իմաստով հանդիսանում է հրապարակային միջոցառման կազմակերպիչ կամ այլ օգտագործող հարցը Ղատարանում մնացել է անպատասխան: Մինչդեռ այդ հարցի պատասխանը ցույց կտար քաղաքացիական գործի լուծումը: Բացի այդ, պարզ չէ, թե այլ հիմնավորումների բացակայության պարագայում ինչու՞ չի կարելի համարել, որ տվյալ գործի փաստերի ներքո հեղինակ կատարողներն իրենք էլ հանդիսանում են իրենց հեղինակային իրավունքի և հարակից իրավունքի օբյեկտների օգտագործողները: Սրանք հարցեր ու փաստարկներ են, որոնց հայցվորը չի կարողացել Ղատարանին սպառիչ պատասխաններ ներկայացնել և բավարար կերպով ապացուցել իր պահանջի հիմնավորվածությունը: Հետևաբար սույն գործի փաստերի նկատմամբ «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի կիրառելի լինելու վերաբերյալ հայցվորի կողմից Ղատարանում, ինչպես նաև նրա կողմից վերաքննիչ բողոքում ներկայացված մեկնաբանությունները նրա ուրույն մեկնաբանություններն են, որոնք հիմնավոր չեն: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 11.01.2007 թվականի թիվ 506-Ն որոշման վերաբերյալ Ղատարանի արտահայտած դիրքորոշմանը, ապա այն հիմնավոր է, քանի որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Բողոք բերած անձի վկայակոչած «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը պարզապես հղում է կատարում ՀՀ կառավարության հիշատակված

որոշմանը՝ որպես լիցենզային պայմանագրի կնքման դեպքում հեղինակային վարձատրության նվազագույն չափի ուղենիշ: Այս որոշումը կիրառելի է միայն այն դեպքում, երբ քաղաքացիական շրջանառության մասնակիցները որոշում են լիցենզային պայմանագիր կնքել: Այդ դեպքում հեղինակային վարձատրության չափը սահմանելիս նրանք չեն կարող որոշմամբ սահմանված նվազագույնից ցածր վարձատրություն սահմանել, ինչը չի կաշկանդում կողմերին ավելի բարձր վարձատրության չափ սահմանելու: Սույն քաղաքացիական գործով որոշումը կիրառելի կլինի միայն այն դեպքում, երբ Դատարանը բավարարել հայցվորի պահանջը և պարտավորեցներ պատասխանողին կազմակերպության հետ լիցենզային պայմանագիր կնքել, որպիսի պարագայում դատարանը պայմանագրի պայմաններից հեղինակային վարձատրության չափը սահմանելիս կառաջնորդվել չէ կառավարության հիշատակված որոշմամբ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով չքաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ, 220-րդ, 221-րդ և 221.1-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության ՀԿ-ի վերաքննիչ բողոքը մերժել:
2. Երևանի քաղաքացիական դատարանի 03.11.2008 թվականի թիվ ԵՔԴ/0368/02/08 վճիռը թողնել անփոփոխ:
3. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել չչ վճռաբեկ դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

նախագահող դատավոր դատավոր դատավոր
 Տ. Նազարյան Կ. Հակոբյան Տ. Սահակյան

Ամսաթիվ:	31-03-2009
Ամսաթիվ:	31-03-2009
Էջերի քանակ:	1-120, 2-128, 3-123, 4-94, 5-158
Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	15-05-2009
Ուր:	Շենգավիթ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Դատական Գործ N: ԵՔԴ/0368/02/08	
Ամսաթիվ:	31-07-2009
Ամսաթիվ:	31-07-2009
Էջերի քանակը:	1-120,2-128,3-123,4-94,5-159

Գործին կից նյութերը:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Գործը ստացվել է:	
Ներկայացվել է դիմում միջնորդություն:	